

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐԻՆ

Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ճախագաղութական գիտական Բարձրագույն

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք բերեց զարգացման անկաշկանդ հնարավորություն: Ավերակների միջից բարձրացավ նա, կառուցեց ազատ, մյուս հանրապետություններին իրավահավասար իր պետականությունը և պատմապաշտ կարճ ժամանակամիջոցում անցավ զարգացման մեծ ուղի: Հայն ճանապարհ բաժանեց նաև գիտության ու մշակույթի ծագման համար:

Արդեն 1920 թ. դեկտեմբերին հիմնադրվեց պետական համալսարանը՝ առաջին ուսումնական ու գիտական հաստատությունը Հայաստանում: Երկար տարիներ այն հանդիսացավ գիտական հետազոտությունների հիմնական օջախը, հատկապես հասարակական գիտությունների բնագավառում:

Հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները ոչ միայն ողջունեցին Հայաստանի սովետական իրականությունը, այլև գործնականում խանդավառությամբ լծվեցին երիտասարդ հանրապետության բարգավաճման վեճ գործին: Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, արտասահմանում գտնվող և արդեն լայնորեն ճանաչված բազմաթիվ գիտնականներ ու արվեստի գործիչներ վերադարձան Հայաստան: Դա հսկայական դեր խաղաց հանրապետությունում գիտության ու մշակույթի զարգացման գործում: Երիտնականների ավագ սերնդի ջանքերով մալր հողի վրա պատրաստվեցին երիտասարդ գիտական կադրեր: Այս ամենի շնորհիվ 1935 թ. երևանում ստեղծվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալ, որի ինստիտուտները տեսական և գործնական բնույթի շոշափելի աշխատանք կատարեցին գիտության տարրեր բնագավառներում: Աստիճանաբար հասունացավ Հայաստանում գիտությունների անադեմիա հիմնադրելու հարցը:

1943 թ. սոյեմբերի 25-ին սովետական կառավարության որոշումով հիմնադրվեց Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության գիտությունների ակադեմիան: Հանրապետության Մինիստրների սովետը հաստատեց ակադեմիայի կազմը՝ 23 ակադեմիկոսներով: Ակադեմիայի առաջին կազմում հաստատվեցին Արտեմ Ալիխանյանը, Աբրահամ Ալիխանովը, Իվան Եղիազարովը, Վաչե Իսազուլյանցը, Ալեքսանդր Հակոբյանը, Վիկտոր Համբարձումյանը, Կոնստանդին Պաֆենհոլցը (ֆիզիկա-տեխնիկական և բնական գիտությունների գծով), Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Ավետիք Իսահակյանը, Երիզոր Ղափանցյանը, Ստեփան Մալխասյանը, Հակոբ Մանանդյանը, Արսեն Տերտերյանը, Հովսեփ Օրբելին (հասարակական գիտությունների գծով), Հրաչյա Բունյաթյանը, Վարդան Գուլբանյանը, Սահակ Կարապետյանը, Խաչատուր Կոշտոյանցը, Լևոն Հովհաննիսյանը, Ալեքսանդր Թամամյանը, Միքայել

Թումանյանը, ինչպես և Օրբելին (կենսաբանական և գյուղատնտեսական դիտությունների դժով): Ակադեմիայի պրեզիդենտ ընտրվեց ՍՍՀՄ դիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հովսեփ Աբգարի Օրբելին: Վրցե պրեզիդենտներ ընտրվեցին Վիկտոր Համադասյի Համբարձումյանը և Վարդան Հովհաննեսի Գուլբանյանը:

Հայրենական պատերազմի ծանր օրերին Հայաստանի դիտությունների ակադեմիայի ստեղծումը հանդիսացավ սովետական կառավարության և կոմունիստական կուսակցության հոգատարության մի նոր վառ արտահայտություն՝ ձեռք առնելով, բովանդակությամբ սոցիալիստական հայ մշակույթի դարգացման նկատմամբ: Ակադեմիայի ստեղծումը հնարավոր դարձավ շնորհիվ այն մեծ օգնության, որը ցուցաբերեցին ողջ դիտաբանները և հասկացան ՍՍՀՄ դիտությունների ակադեմիան Հայաստանում դիտական աշխատանքը նոր մակարդակի բարձրացնելու գործում:

Հայաստանի դիտությունների ակադեմիայի առջև կանգնած խնդիրները մասին ակադեմիայի ընդհանուր ժողովում, 1944 թ. մայիսի 11-ին, ՍՍՀՄ դիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Լ. Կոմարովը ասաց. «Չնայած պատերազմին, ձեր հիանալի երկրում ամենուրեք կյանքը հորդում է առատ աղբյուրի պես, Հայաստանի քաղաքներում և գյուղերում եռում է ստեղծագործ աշխատանքը: Հայաստանի մշակույթի ծաղկման վկայությունն է դիտությունների ակադեմիայի՝ ձեր հանրապետության դիտական մտքի գլխավոր շտաբը ստեղծումը: Ձեր ակադեմիան ընդգրկում է ղանադ:սն ճյուղերի դիտություններ, անհրաժեշտ է դարգացնել ու հորաքնել ճշգրիտ դիտությունների դժով աշխատանքը և լայնորեն արմատավորել դիտության նվաճումները Հայաստանի և մեր մեծ Միության մյուս հանրապետությունների ժողովրդական տնտեսության մեջ: Իրա համար ձեզ մոտ առկա են բոլոր նախադրյալներն ու տվյալները: Ձեր երկիրը հարուստ է հնադարյան մշակույթի պատմական հուշարձաններով, դուք ունեք հանաժոռների հարուստ պաշարներ, էներգետիկ և ոռոգրչ հզոր բազաներ, վերջապես ձեր երկրի հարուստ բուսական և կենդանական աշխարհը հիանալի խթան են հանդիսանում դիտական աշխատանքի ծավալման համար»:

Հենց այս նշանաբանի տակ էլ Հայաստանի երիտասարդ ակադեմիան ձեռնամուխ եղավ համախմբելու հայ դիտական միտքը, գլխավորելու այն, ժամանակակից դիտաբան մեթոդներով հիմնավորելու հետադոտություններ ու ուսումնասիրություններ, դիտական վերլուծության բովով անցկացնելու հարազատ ժողովրդի բովանդակ մշակույթը, հալտնաբերելու բուրեռացած արժեքները աղղային և համամարղկային իմաստով, դրանով իսկ բր լուման մտցնելով սովետական Միության բոլոր ժողովուրդների դիտությունների դանձարանը, էլ ավելի մեծ շափով ներդրոժելու հայ ժողովրդի մշակույթի և հանրապետության ժողովրդական տնտեսության դարդացման վրա:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1943 թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ հաստատվեցին ակադեմիայի նանոնապրությունը և կառուցվածքը:

Համաձայն այդ որոշման ակադեմիան համարվում էր հանրապետության դիտական մտքի կենտրոնը: Նա բաղկացած էր ֆիզիկա-մաթեմատիկական և բնական դիտությունների, կենսաբանական դիտությունների, հասարակական դիտությունների և գյուղատնտեսական դիտությունների բաժանմունքներից: Այդ բաժանմունքները միավորում էին 24 հիմնարկություն, որոնցից

15-ը ինստիտուտներ էին: Այդ հրահանգներն էին ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիական, երկրաբանության, ջրաէներգետիկ, շինանյութերի և կառուցվածքների, բուսաբանության, գյուղատնտեսության, ֆիզիոլոգիայի, բույսերի դեմատիկայի, խաղողագործության և դինեգործության, անասնապահության, երկրագործության, պատմության, լեզվի, գրականության ինստիտուտները, Նրևանի աստղադիտարանը, սեյսմիկ և Սևանի հիդրոբիոլոգիական կայանները, միկրոբիոլոգիայի, տնտեսագիտության, հողագիտության սեկտորները, բուսաբանական այգին, պատմության թանգարանը:

1946 թ. հունիսի 21-ին ակադեմիայի ընդհանուր ժողովը հաստատեց վիցե-պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի ներկայացրած «Ակադեմիայի դարգացման հնգամյա պլանը»: Այն բխում էր ՍՍՀՄ, մասնավորապես Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության դարգացման հնգամյա պլանից, նրա տեխնիկական և գիտական խնդիրների լուծման անհրաժեշտությունից: Հնգամյա պլանը ընդգրկում էր 95 թեմա, որոնցից 34-ը՝ ֆիզիկա-մաթեմատիկական, բնական և տեխնիկական ոլորտությունների գծով, 18-ը՝ գյուղատնտեսական գիտությունների, 23-ը՝ կենսաբանական գիտությունների, 20-ը՝ հասարակական գիտությունների գծով:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձված գիտության այն ճյուղերի վրա, որոնք մինչև ակադեմիայի հիմնադրումը հանրապետությունում ներկայացված չէին: Նախատեսվում էր դարգացնել աստրոֆիզիկական, կոսմիկական ճառագայթների ֆիզիկական, մաթեմատիկական, սիլիկատների քիմիան, մեխանիկական, էլեկտրատեխնիկական, ագրոքիմիան, ֆարմացևտիկ քիմիան, բույսերի ֆիզիոլոգիան, հասարակական ոլորտությունների առանձին ճյուղեր: Այս իսկ պատճառով հետագա տարիներին ակադեմիայի կառուցվածքը ենթարկվեց զգալի փոփոխությունների: 1952 թ. ֆիզիկա-մաթեմատիկական, բնական և տեխնիկական ոլորտությունների բաժանմունքի բազայի վրա հիմնվեց երկու բաժանմունք՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների և տեխնիկական գիտությունների: Ակադեմիայի կազմում ստեղծվեցին նոր միավորներ՝ ֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, նույն օրդանական քիմիայի ինստիտուտները, Բուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանը, էլեկտրատեխնիկայի լաբորատորիան, փյոյսոփայության սեկտորը, արվեստի տեսության և պատմության սեկտորը, գրականության և արվեստի թանգարանը:

ՍՍԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1956 թ. փետրվարի 14-ի որոշման համաձայն, գյուղատնտեսական բնույթի հիմնարկները ակադեմիայից հանձնվեցին գյուղատնտեսության մինիստրության անօրինությանը: Այդ կապակցությամբ վերացավ գյուղատնտեսական ոլորտությունների բաժանմունքը: 1960 թ. ստեղծվեց բժշկական գիտությունների բաժանմունքը, որը միավորում էր ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի, սրտաբանության և սրտի վիրաբուժության, ֆիզիոլոգիայի ինստիտուտները, ռադիոբիոլոգիայի սեկտորը:

Ակադեմիան կառուցվածքային նոր փոփոխության ենթարկվեց յոթնամյակի տարիների ընթացքում: Ստեղծվեցին քիմիական գիտությունների և երկրի մասին գիտությունների բաժանմունքները, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքը վերանվանվեց ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների բաժանմունք: Ստեղծվեցին մի շարք նոր հիմնարկներ՝ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ինժեներային սեյսմոլոգիայի և գեոֆիզիկայի, բիոքիմիայի, արվեստի, տնտեսագիտության, հնագիտության և աղ-

գաղության, միկրոբիոլոգիայի, ագրոքիմիական պրոբլեմների հետազոտության, կիրառական կենսաբանության ինստիտուտները, Բյուրականի օպտիկա-մեխանիկական լաբորատորիան, հաշվողական կենտրոնը, ֆիզիկա-տեխնիկական լաբորատորիան, քիմիական ֆիզիկայի լաբորատորիան, արևելագիտության սեկտորը:

ՍՍՀՄ կենտկոմի և ՍՍՀՄ Աինիստրների սովետի 1963 թ. ապրիլի 11-ի որոշմամբ ակադեմիայի կողմից այլ ղերատեսչությունների հանձնվեց 11 գիտահետազոտական հիմնարկություն: Տեխնիկական գիտությունների և բժշկական գիտությունների բաժանմունքները վերացվեցին:

Այսպիսով, կարճ ժամանակամիջոցում ակադեմիայի ներսում ստեղծվեցին և այլ մինիստրությունների ու ղերատեսչությունների հանձնվեցին տեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական բնույթի 20 գիտահետազոտական հիմնարկություն: Նրանցից շատերը գլխավորվում են ակադեմիայի անդամների կողմից և գտնվում են մշտական գիտական կապի մեջ ակադեմիայի հետ:

Ակադեմիան ներկայումս միավորում է 28 գիտահետազոտական հիմնարկություն՝ Բյուրականի աստղադիտարանը, մաթեմատիկայի և մեխանիկայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտները, հաշվողական կենտրոնը, ֆիզիկա-տեխնիկական և Բյուրականի օպտիկա-մեխանիկական լաբորատորիաները (ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների բաժանմունք), երկրաբանության, ղեռնֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտներ (երկրի մասին գիտությունների բաժանմունք), օրդանական քիմիայի, նուրբ օրդանական քիմիայի, բիոքիմիայի ինստիտուտները, քրիմական ֆիզիկայի լաբորատորիան (քիմիական գիտությունների բաժանմունք), ֆիզիոլոգիայի, բուսաբանության, կենդանաբանության, ագրոքիմիական պրոբլեմների, կիրառական կենսաբանության, միկրոբիոլոգիայի ինստիտուտները, Սևանի հիդրոբիոլոգիական կայանը (կենսաբանական գիտությունների բաժանմունք), պատմության, տնտեսագիտության, լեզվի, զրականության, հնագիտության և ազգագրության, արվեստի ինստիտուտները, փիլիսոփայության և իրավունքի, արևելագիտության սեկտորները (հասարակական գիտությունների բաժանմունք):

Քսանհինգ տարվա արդյունավետ աշխատանքների շնորհիվ մեր ակադեմիան դարձավ Սովետական Սիության խոշորագույն գիտական կենտրոններից մեկը, որը ընդունակ է լուծելու կյանքի կողմից հրամայարար առաջ քաշվող կարևորագույն գիտական խնդիրներ: Ներկայումս մեծ սշխատանք է կատարվում գիտական աշխատանքի արդյունավետության բարձրացման, գիտության և արտադրության միջև օրդանական կապի ապահովման ուղղությամբ, հարցեր, որոնք ղնալով ձեռք են բերում ավելի հրատապ նշանակություն, որը պայմանավորվում է հասարակական կյանքում գիտության՝ անմիջական արտադրողական ուժի վերածվելու օրինաչափ պրոցեսով:

Խոսելով ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների նոսպլեքսի մասին, անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի ակադեմիայում ներկայումս ստեղծվել են այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են տիեզերական հետազոտությունների ծավալմանը: Եւ վերաբերում է ոչ միայն վերերկրյա միջոցների օգնությամբ տիեզերքի հետազոտության ուղղությամբ կատարվող Բյուրականի աստղադիտարանի հայանի նվաճումներին, այլ նաև ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի աշխատանքներին, որոնք լուրջ նպրդրում են հեռավոր տիե-

դերական կապի կազմակերպման դործում: Այստիպում գտնվող այս ինստիտուտում սշակվող սեթողներն ու սարքերը հաջողությամբ օղտադործվում են տիեղերական կապի կետերում: Բյուրականի աստղագիտարանը և օպտիկա-սեխանիկական լաբորատորիան տիեղերական դիտարկումների համար ասպարատուրայի ստեղծման դործում զգալի փորձ են ձևոք բերել: Ակադեմիան հնարավորություն ունի այդ նույն նպատակների համար արտադրել նաև հաշվի սարքավորում: Վերջապես այն բանի սպակցությամբ, որ լազերները տիեղերական հետազոտություններում կիրառման լայն հեռանկարներ ունեն, հետադայում այդ դործին կարող է սասնանել նաև ուղիացիոն ֆիզիկայի լաբորատորիան, որտեղ հետազոտություններ են կատարվում լույսի քվանտային գեներատորների տեսության ուղղությամբ և արտադրվում են բյուրեղներ քվանտային գեներատորների համար ու լույսի քվանտային գեներատորներ: Այդ արտադրանքը հաջողությամբ ցուցադրվեց լայպցիգի 1965 թ. համաշխարային ցուցահանգեսում:

Պետք է նշել, որ ֆիզիկա-մաթեմատիկական դիտությունների յուրաքանչյուր առանձին ճյուղում կատարվող հետազոտությունները ունեն խիստ որոշակի պրոֆիլ: Այսպես, օրինակ, մաթեմատիկոսների աշխատանքները կենտրոնացվում են անալիտիկ ֆունկցիաների տեսության բնագավառում, որտեղ րստացված են մեծ թվով նոր արդյունքներ: Կարևոր արդյունքներ են ստացված ինտեղրալ փոխակերպումներում մոտավորության տեսության ոժում. կոմպլեքսային բնագավառում, զիֆերենցիալ հավասարումների ասպարեղում նոր քվադիանալիտիկ թվերը գծով և կիրառական մաթեմատիկայի ու մաթեմատիկական միճանադրության մի շարք հարցերի ուղղությամբ: Ֆունկցիաների տեսության բնագավառում ստացված են անսահման դիֆերենցիվող ֆունկցիաների էականորեն նոր կարգեր: Այդ բնագավառի դարպացման ցուցանիշներից մեկն այն է. որ մաթեմատիկոսների միջադպային միության որոշմամբ նրանում տեղի ունեցավ անայիտիկ ֆունկցիաների գծով միջադպային լայն գրտաժողով, որտեղ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մաթեմատիկոսների հետազոտությունները ներկայացվեցին մի շարք արժեքալոր գեկուցումներով:

Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում կարծր մարմնի մեխանիկայի ասպարեղում կատարվող հետադոտությունները (առաձղականության, պլաստիկության, սողքի տեսության, թաղանթների ու սալերի բնահանուր տեսության) համրնդհանուր ճանաչում են ստացել: Գիտության այդ ճյուղի համառ հատկապես բնորոշ է փորձարարական ու տեսական հետազոտությունների սերտ զուգորդումը:

Կարծր մարմնի ֆիզիկայի ասպարեղում հետաքրքիր հետազոտություններ են կատարված պոլիմերների ֆիզիկայի ոժում. հատուաբերելով նրանց կարևոր պյեղաէլեկտրական հատկությունները: Մոլեկուլյար ֆիզիկայի մի բանի այլ հարցեր մշակվում են ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում:

Հաշվիչ տեխնիկայի բնագավառում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում մեքենայական թարգմանության գծով տարվող աշխատանքները: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հաշվիչ կենտրոնում մշակված է էլեկտրոնային հաշվիչ մեքենա, որը մաթեմատիկական տեքստերը ոուսերենից թարգմանելու է հայերեն: Այդ մեքենայով արդեն ստացված են առաջին

ստորագրողների թվաքանակի շնորհիվ, որոնք ցուցաբերում են տալիս մեքենայի բավարարող աշխատանքը:

Հայաստանի համար շատ կարևոր է ներկրի մասին դիտությունների՝ երկրաբանության, դեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի դարգացումը: Մեր հանրապետությունում, չնայած նրա տերիտորիայի փոքրությանը, ներկայացված են տարբեր դարաշրջաններին վերաբերող երկրաբանական ֆորմացիաներ: Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի երկրաբանները շատ բան են արել Հայաստանի ընդերքում օգտակար հանածոների բաշխման օրինաչափությունները բացահայտելու համար, որ դործնական մեծ նշանակություն ունեցավ: Կանոնավոր կերպով իզոտոպային վերլուծման ժամանակակից մեթոդների հիման վրա չափազանց հեռանկարային աշխատանքներ են տարվում ինչպես հարաբերական, այնպես էլ բացարձակ երկրաժամանակագրության ուղղությամբ: Մշակվում են ընդերքում հանքային մարմինների հայտնաբերման դեոքիմիական մեթոդները:

Հայաստանի համար անսոնձնահատուկ նշանակություն ունի քիմիան: Նրա զարգացման հետ ամենից առաջ կապվում է մեր երկրի վիթխարի հումքային միջոցների նպատակահարմար օգտագործման հնարավորությունը: Ակադեմիայի քիմիայի ինստիտուտը անցած տարիներին ցույց տվեց այդպիսի հարցերից մեկի ճշտ լուծման օրինակ, մշակելով նեֆելինային սիենիտների հարրատացման և կոմպլեքսային օգտագործման նոր մեթոդ: Հեռապայում այդ աշխատանքները հաջողությամբ արմատավորվեցին արդյունաբերության մեջ:

Դործնական տեսակետից հետաքրքրական մի շարք նյութեր ու պրոցեսներ են մշակվել օրդանական քիմիայի ինստիտուտում: Որպես օրինակ կարելի է նշել պոլիտրիներ և բլորպոլիտրիներ, որոնք ունեն բացառիկ բարձր հակակոռոզիոն հատկություններ: Կարելի է նշել նաև ունիվերսալ կարբինոլային սոսինձը: Հեղինակավոր արդյունաբերական կազմակերպությունների կարծիքով այդ նյութերը չափազանց անհրաժեշտ են աճող Միություն համար: Օրդանական քիմիայի ինստիտուտում հաջողությամբ զարգանում են նաև քիմիական տեխնոլոգիայի գծով կատարվող հետադոսություններ՝ երկփուլ հոսանքում իրադրծվող պրոցեսների ասպարեզում: Այստեղ մշակվել ու ներդրվել է օդաճնշիչ տրանսպորտի նոր եղանակ, որը խիստ պարզեցնում է սարքավորումը, տասնապատիկ կրճատում է էներգիայի տեսակարար ծախսումը և հնարավորություն է տալիս լուծելու մի շարք տեխնիկական պրոբլեմներ:

Առանձնապես պետք է նշել ակադեմիայի նույն օրդանական քիմիայի ինստիտուտի զգալի աշխատանքները: Այստեղ մշակվում է «Ֆիզիոլոգիական տեսակետից ակտիվ բնական և սինթետիկ նյութերի քիմիա» պրոբլեմը: Ընստիտուտի կոլեկտիվը որոնում է նոր, ինքնատիպ բուժական պրեպարատներ և ուսումնասիրում սինթեզված միացումների կենսաբանական ակտիվության կախումը նրանց քիմիական կառուցվածքից: Անցած տարիների ընթացքում սինթեզված են մի շարք արժեքավոր պրեպարատներ, որոնք հաջողությամբ դործածվում են երկրի տարբեր կլինիկաներում:

Որոշակի հաջողություններ կան կենսաբանական դիտությունների ասպարեզում: Աղբյուրի միջոցով լաբորատորիայում բույսերի անհող սնման ասպարեզում հետաքրքիր արդյունքներ են ստացվել: Կարևոր նշանակություն ունեն կենդանաբանության ինստիտուտում տարվող աշխատանքները: Վիտամիններով սնուցելու, ինչպես նաև կերին միկրոէլեմենտներ ավելացնելու միջոցով պայ-

քար է մղվում դադարեցնել և կենդանիների հիմնական դեմքերի դեմ: Մշակված ուղեգրերը փորձնական կարգով ստուգված են մի քանի կոլտնանսություններում և դրական արդյունքներ են տվել:

Լուրջ նշանակություն ունեն ապացուցողական մանրէաբանների՝ ապոֆիլ պրեպարատների ստացման ուղղությամբ կատարված աշխատանքները: Մշակված են դրանց արդյունաբերական արտադրության տեխնոլոգիայի հիմունքները: Միկրոբիոլոգիայի ինստիտուտը նպաստում է բիոֆիզիկական արտադրության դարձացմանը: Ուղեգրության են արժանի բուսաբանության ինստիտուտի՝ բույսերի անհատական դարձացման օրինաչափությունների և օնոգենեզի պրոցեսների ղեկավարման ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքները:

Վերջին ամիսներս լուրջ հաջողություններ է ձեռք բերել ապացուցողական Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Այսպես, կատարվել է մի շարք հետազոտությունների արդյունքները արդեն ներդրված են կլինիկական պրակտիկայում: Բերե օրինակ նշենք այն աշխատանքները, որ կատարված են ուղեղի կտրատումից հետո խախտված ֆունկցիաների վերականգնման ուղղությամբ:

Բիոբիոֆիզիկական ինստիտուտում աշխատանքներ են կատարվում գլխուղեղի բիոբիոֆիզիկական րնադալատում: Մասնավորապես պետք է նշել այն հետազոտությունները, որոնք վերաբերում են գլխուղեղի հյուսվածքի ադոտային փոխանակման մեջ գամմա-ամինո-կալագաթիլի դերին և ակտիվ գործողության նորմալ պրոպագանդան նյութերի հայտնաբերմանը:

Մեր ապացուցողական համար հայադիտության ասպարեղում տարվող աշխատանքները ավանդական են: Հնագիտական պեղումներից ստացված հսկայական նյութեր, ինչպես նաև ձեռագրերի մեծ ժառանգությունը հաստատուն հիմք են հանդիսանում հայ ժողովրդի անցյալը հեռավորելու համար: Սակայն բնորոշ է, որ վերջին ժամանակներս ուժեղացել են այն հետազոտությունները, որոնք վերաբերում են Հայաստանի պատմության նորագույն շրջանին, հատկապես սովետական ժամանակաշրջանին: Հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի պատմությանը, սովետահայ գրականության պատմությանը, սոցիալիզմից կոսմոսիզմին անդնելու օրինաչափություններին:

Պատմության ինստիտուտը իր ուժերը կենտրոնացրել է «Հայ ժողովրդի պատմության» բաղմահատորյակի ստեղծման շուրջը: Լույս է տեսել բաղմահատորյակի VII հատորը, որը նվիրված է Սովետական Հայաստանում սոցիալիստական շինարարության պատմությանը (1917—1941 թթ.): Հատկանշական է, որ բաղմահատորյակի ստեղծմանը մասնակցում են հնագիտության և ազգագրության, դիմապատմության, արվեստի, տնտեսագիտության ինստիտուտների, արևելագիտության, փիլիսոփայության և իրավունքի սեկտորների աշխատակիցները:

Միջազգային փոփոխություն է կատարվել լեզվի և տնտեսագիտության ինստիտուտներում, որանց ղիտահետադուտան աշխատանքներում սկսել են կիրառվել քանակական մեթոդները: Այդ մեթոդների կիրառման համար տնտեսագիտության ինստիտուտը ձեռք է բերել «Հրազդան 2» էլեկտրոնային հաշվիչ մեքենա:

Հնադիտության և ազգադրության ինստիտուտը հաջողությամբ իրականացնում է «Հայաստանի հնադիաական հուշարձանները» և «Դիվան հայ վիճակագրության» աշխատությունների հրատարակումը:

Գրականության ինստիտուտում աշխատանքները ընթանում են «Սովետահայ գրականության դարդացման օրինաչափությունները», «Հայ գրականության տարրեր ժամանակաշրջանների պատմության ուսումնասիրություն», «Հայ գրականության դասականների երկերի հրատարակման», «Գրական կայերի» և այլ պրոբլեմների շուրջը: Վերջերս լույս տեսան «Հոկտեմբերը և հայ գրականությունը» և «Սովետահայ գրականության պատմություն» աշխատությունները, «Վ. Բրյուսովը Հայաստանի և հայ գրականության մասին» ժողովածուն:

Արվեստի ինստիտուտի աշխատակիցները մի շարք արժեքավոր դործեր են ստեղծել երաժշտության, թատրոնի, կինոյի, կերպարվեստի, շեքսպիրադիտության և արվեստագիտության այլ ընդհանուր ոլորտներում:

Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներում մշակվող պրոբլեմների դիտական ղեկավարությունը իրականացնում են բաժանմունքի մեջ մտնող ՀՍՍՀ ԳԱ 12 ակադեմիկոսներ և 12 թղթակից-անդամներ:

Վերջին տարիներին դիտական կադրերի աճի հետ միասին հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում տեղի է ունեցել նաև լուրջ առաջընթաց դիտահետազոտական աշխատանքների որակական ցուցանիշների բարձրացման, արժեքավոր աշխատությունների ստեղծման ուղղությամբ:

Իր առանգը մտցնելով սովետական գիտության դարդացման դործում, Հայաստանի գիտության աշխատողների սովոր բանակը նպաստում է մեր երկրի գիտության ու տեխնիկայի ընդհանուր վերելքին, դրանով իսկ ակտիվորեն մասնակցելով երկրի արտադրողական ուժերի դարդացման դործին:

Գիտական աշխատանքների խորացման և ընդլայնման հետ միաժամանակ բաղմապատկվեց և դիտական աշխատողների թիվը, բարելավվեց նրանց որակական կազմը: 1943 թ. համեմատությամբ ակադեմիայը դիտական և գիտաօժանդակ աշխատակիցների թիվը ավելացել է 15 անգամ և այժմ հասել է 4400 հոգու: Աշխատակիցների ավելի քան 800-ը ունեն գիտությունների դոկտորի և թեկնածուի աստիճան: Ասպիրանտուրայով անցել են 2300-ից ավելի երիտասարդ կադրեր, այժմ Երևանում, Կիևում, Մոսկվայում, Լենինգրադում, Նովոսիբիրսկում և երկրի գիտական այլ խոշոր կենտրոններում ասպիրանտական ուսում են ստանում 300-ից ավելի խոստումնալից ու շարունակելի երիտասարդներ:

Գիտական կադրերի որակական աճը, դիտական խոշոր պրոբլեմների հաջող լուծումը տարիների ընթացքում հնարավորություն տվեցին ընդլայնել ակադեմիայի կազմը: Այժմ ակադեմիան իր կազմում ունի 91 իսկական և թղթակից-անդամներ: Տարրեր ժամանակներում որպես ակադեմիկոսներ ընտրվեցին ճանաչված գիտնականներ, գրականության և արվեստի խոշոր դործիչներ Սատուր Աղայանը, Գեղամ Աղաջանյանը, Արտաշես Առաքելյանը, Արաքսյա Բաբայանը, Գուրգեն Բաբաջանյանը, Գաղիկ Դավթյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Սուրեն Երեմյանը, Ստեփան Զորյանը, Անդրանիկ Իոսիֆյանը, Արամ Խաչատրյանը, Մարտին Կասյանը, Արտաշես Կարինյանը, Սերգեյ Համբարձումյանը, Նադուշ Հարությունյանը, Արգար Հովհաննիսյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Արարատ Ղարիբյանը, Հովհաննես Մաղաքյանը, Մանվել Մանվել-

յանը, Սերգեյ Մերգելյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Սերգեյ Մկրրտչյանը, Արմենակ Մնջոյանը, Արմենակ Նաղարովը, Արամ Նալբանդյանը, Մկրրտիչ Ներսիսյանը, Արտաշես Շահինյանը, Բորիս Պիոտրովսկին, Մխիթար Զրրբաշյանը, Մարտիրոս Սարյանը, Նորայր Սիսակյանը, Մկրտիչ Տեր-Կարապետյանը, Բարթոլոմեոս Ֆանարջյանը: Հայաստանի ակադեմիկոսների ավանդը գիտության մեջ լայնորեն հայտնի է ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից շատ հեռու:

Դասական հարուստ ժառանգության հիման վրա կերտելով իր ուրույն դեմքը, սկզբունքային նշանակություն ունեցող ինքնատիպ աշխատանքներով հարստացնելով հայրենական ու համաշխարհային գիտությունը և առնականանալով, հանրապետության դիտական միտքը իր վրա է գրտվել գիտական լայն հասարակության ուշադրությունը, դարձել արժանի ժառանգորդը դեռևս հին դարերում պատմական թատերաբեմ ելած ժողովրդի գիտություն գոհարների: Գիտության շատ բնագավառներում հայ գիտնականները քայլում են համաշխարհային գիտության առաջին շարքերում: Հայաստանի գիտության համընդհանուր ճանաչման մասին է խոսում նաև այն փաստը, որ օրըստօրե լայնանում են գիտությունների ակադեմիայի կապերը տարբեր երկրների ակադեմիաների ու դիտական կենտրոնների հետ: Այդ կապերի աճի մասին են վկայում Երևանում հրավիրվող միջազգային բաղմամբիվ գիտական համաժողովները: Յուրաքանչյուր տարի Հայաստան են ժամանում հարյուրավոր օտարերկրացի գիտնականներ՝ ակադեմիայի դիտական հիմնարկների աշխատանքներին ծանոթանալու, համատեղ դիտական աշխատանքներ կատարելու համար: Առտասահմանյան երկրների դիտական կենտրոններում գիտական գործուղման մեջ են լինում ակադեմիայի շատ գիտական աշխատակիցներ: Ուժեղանում են կապը և փոխօգնությունը հատկապես սոցիալիստական երկրները ակադեմիաների հետ:

Անցած տարիների ընթացքում մեծապես ամրապնդվեց ակադեմիայի նյութական բազան: Կառուցվեցին Բյուրականի աստղադիտարանը, նուրբ օրգանական քիմիայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկայի, օրգանական և անօրգանական քիմիայի, երկրաբանության, մաթեմատիկայի և մեխանիկայի, միկրոբիոլոգիայի, ագրոքիմիայի, բուսաբանության, ֆիզիոլոգիայի, բիոքիմիայի ինստիտուտների, հաշվողական կենտրոնի հարմարավետ շենքերը, կառուցվում են կիրառական կենսաբանության, օրգանական քիմիայի, ֆիզիկական հետազոտությունների, կոսմիկական ֆիզիկայի ինստիտուտների շենքերը, միկրոբիոլոգիական կոմպլեքսը, հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների և ֆունդամենտալ զրադարանի շենքերը: Միայն 1968 թ. շինարարական աշխատանքների համար նախատեսված դումարը 40 անգամ դարձանցում է 1944 թ. մակարդակը:

Ակադեմիայի հիմնարկները հարստացան հազվագյուտ ժամանակակից գիտական գործիքներով և սարքավորումներով, որոնք հանդիսանում են հետազոտական տեխնիկայի վերջին խոսքը: Շատ գործիքներ ու սարքեր ստեղծվեցին ակադեմիական հիմնարկների կողմից:

Ակադեմիայի զրադարանային ֆոնդը 1963 թ. սկզբին հավասար էր 2 միլիոն 500 հազար միավորի: Յուրաքանչյուր տարի ձեռք է բերվում մոտ 130 հազար նոր գրադարանային միավոր, այսինքն այնքան, որքան 1943 թ. ընդ-

հանուր ֆոնդն էր: Միայն ֆունդամենտալ և Բյուրականի աստղադիտարանի զրադարաններն ունեն գրքափոխանանություն 869 արտասահմանյան կես:

Հնդկացիներն է ակադեմիայի հրատարակչական դործունեությունը, օրրստ-օրե բարձրանում են հրատարակվող աշխատությունների գիտական մակար-դակը և պոլիդրաֆիական որակը:

Ակադեմիայի տպագիր արտադրանքի մեջ կարևոր տեղ են զբաղում պար-բերական հրատարանությունները: Անցյալում լույս տեսնող տեղեկագրերի հա-սարակական դիտությունների, ֆիզիկա-մաթեմատիկական դիտությունների, կենսաբանական դիտությունների և տեխնիկական դիտությունների սերիաների փոխարեն այժմ լույս են տեսնում «Պատմա-բանասիրական հանդես», «Հա-սարակական դիտությունների լրագրեր», «Կենսաբանական հանդես», «Քիմիա-կան հանդես», «Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկության հանդես», «Երկրի մասին դիտությունների տեղեկագիր», «Տեխնիկական դիտությունների տեղե-կագիր», «Մաթեմատիկա», «Մեխանիկա», «Ֆիզիկա», «Աստրոֆիզիկա» ամ-սագրերը: «Աստրոֆիզիկական» թարգմանաբար հրատարակվում է նաև Ամերի-կայի Միացյալ Նահանգներում: Լույս է բնծայվել Հայկական ՍՍՀ ԴԱ «Զեկույց-ների» 300 համար: Այսպիսով, 1943 թ. մեկ պարբերականի փոխարեն այժմ հրատարակվում է 12-ը:

Արդյունավետ աշխատանք է կատարվում նաև ակադեմիայի մի շարք ինո-հուրդներում և սյրոբլեմային հանձնաժողովներում: Նախագահությանն առն-թեր դործում են հրատարակչական-իմբադրական, գիտական կադրերի պատ-րաստման, բնագիտության և տեխնիկայի պատմության, գիտահետադոտական աշխատանքների կոորդինացման, բնության պահպանության ինոհուրդները, նոր տեխնիկայի կիրառման, մեքենաշինության տեխնոլոգիայի և միջադդա-յին գիտական կապերի հանձնաժողովները, գիտական մի շարք բնկերություն-ներ:

* * *

Քսանհինգ տարեկան է Սովետական Հայաստանի դիտությունների ասա-դեմիան, բայց նրա կատարած գլոբները իրենց ուրույն տեղն են զբաղել գի-տության մեջ:

Դիտության զարգացման համար մեր երկրում ստեղծված լայն սլայման-ները, աճած բարձրորակ գիտական կադրերի, ժամանակակից գիտական լաբո-րատոր սարքերի առկայությունը, գիտական աշխատողների հին և նոր սերնդի սերտ հասագործակցությունը Հայաստանի գիտությունների ակադեմիայի հա-մար բացում են բեղմնավոր աշխատանքի և զարգացման նոր հեռանկարներ: